## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
## Ա Պ Ա Ր Ա Ն Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2017Թ N 07-Ն

## ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ, 35-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ մասերի պահանջներին համապատասխան՝

***Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Ապարանի քաղաքային համայնքի 2017-2021 թթ զարգացման հնգամյա ծրագիրը՝ համաձայն N1 հավելվածի:
2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի զարգացման ծրագիրը մշակվել է՝ ելնելով համայնքում առկա խնդիրների լուծման և բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավման անհրաժեշտությունից, որոնք նպատակաուղղված են բնակչության կյանքի որակի բարելավմանը և համայնքի կենսագործունեության ու համաչափ զարգացման ապահովմանը:

Նպատակն է՝ բյուջեի սուղ միջոցների առավել նպատակային և արդյունավետ օգտագործմամբ, գործարարների ու դոնորական կազմակերպությունների հնարավորությունների ներգրավմամբ և ՀՀ Կառավարության օժանդակությամբ հետևողականորեն ապահովել համայնքային խնդիրների լուծումը և համաչափ զարգացումը:

3. Պարտավորեցնել համայնքի ղեկավարին՝

ա/Ապահովել օրենքով ՏԻՄ-երին վերապահված սեփական լիազորությունների ամբողջական ու լիարժեք իրականացումը՝ համայնքի ֆինանսական հնարավորությունների ապահովման գործում: էականորեն բարձրացնել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ի հաշիվ մասնագետների աշխատանքի արդյունավետության բարձրացման, տեղեկատվական արդի համակարգերի ներդրման և արդյունավետ շահագործման, ինչպես նաև հարկային ավելի խիստ ու արդյունավետ համակարգի ու մոտեցումների ներդրմամբ:

բ/Մոբիլիզացնել համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքում գործող կազմակերպությունների, դոնոր կազմակերպությունների, գործարարների և բնակիչների ուժերը՝ ծրագրով նախատեսված միջոցառումների կատարմանը պատշաճորեն աջակցելու համար:

գ/Ապահովել համայնքի զարգացման ծրագրի հրապարակայնությունը, կատարման ընթացքի մասին պարբերաբար տեղեկացնել բնակչությանը:

4.Ավագանու խնդիրը համարել անհրաժեշտ օգնություն և աջակցություն ցուցաբերելու համայնքի ղեկավարին՝ զարգացման ծրագրի իրականացման գործում, նպաստել համայնքի բնականոն զարգացմանը, բնակչության կյանքի պայմանների բարելավմանը, սոցիալ տնտեսական խնդիրների լուծմանը:

5.Զարգացման ծրագրի կատարման ընթացքին անրադառնալ տարեկան հաշվետվություններում:

6.Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի վրա:

Ավագանի՝ Կողմ (10), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Արկադի Ալեքսանյան
Արսեն Ազիզյան
Նվարդ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Ռոման Հակոբյան
Մորիս Սարիբեկյան
Մուշեղ Տոնոյան
Ասատուր Քոչարյան
Արթուր Փարվանյան

**Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ apaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2017Թ N 08-Ա

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն համարվող 0.0049 հա և 0.0235 հա հողամասերի գործառնական նշանակությունները /հողատեսքերը/ փոխել՝ համաձայն աղյուսակի:
2.Քաղաքացի Ալեքսանդր Հակոբյանին վարձակալության իրավունքով պատկանող 0.17 հա հողամասի գործառնական նշանակությունը /հողատեսքը/ փոխել՝ համաձայն աղյուսակի:
3.Համայնքի ղեկավարին՝ ընդունել համապատասխան որոշում և նախապատրաստել անհրաժեշտ փաստաթղթեր հողամասերի գործառնական նշանակությունները փոփոխման համար:

Աղյուսակ

| Հ/Հ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը/հա/ | Հողամասերի փաստացի հողատեսքերը | Հողամասերի փոփոխվող հողատեսքը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Մահուքի Գևորգի 1/7 | 0064-0189 | 0.0049 | Բնակավայրերի/այլ | Բնակավայրերի/հասարակական կառուցապատման |
| 2. | Գարեգին Նժդեհի 3/3 | | 0.17 | Բնակավայրերի/այլ | Բնակավայրերի/հասարակական կառուցապատման |
| 3. | Ջ.Դարյան 49/2 | 0120-0027 | 0.0235 | Բնակավայրերի/այլ | Բնակավայրերի/բնակելի կառուցապատման |

Ավագանի՝ Կողմ (10), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Արկադի Ալեքսանյան
Արսեն Աղիզյան
Նվարդ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Ռոման Հակոբյան
Մորիս Սարիբեկյան
Մուշեղ Տոնոյան
Ասատուր Քոչարյան
Արթուր Փարվանյան

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Աբրահամյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
**15-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2017Թ N 09-Ա**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

1.Թույլատրել Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարին՝ համայնքի սեփականություն համարվող հողակտորները մրցութային կարգով վարձակալության տրամադրելու համար:
2.Հաստատել վարձակալության տրամադրվող հողամասերի մեկնարկային գները և հավելաճի քայլերը՝ համաձայն աղյուսակի:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող տասներորդ օրը:
4.Համայնքի ղեկավարին՝ ապահովելու մրցույթի հրապարակայնությունը, նախապատրաստել փաստաթղթեր մրցույթը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

Աղյուսակ

| Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Նպատակային նշանակությունը, հողատեսքը | Մակերեսը/հա/ | Մեկնարկային վճար/դրամ/ | Հավելաճի քայլ/դրամ/ | Անվանումը | Վարձակալման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Կոլոյի սարի տարածք | 0214-0103 | Գյուղ/վարելահող 3-րդ կարգ | 0.354 | 3000 | 200 | Վարելահող | 25 |
| 2. | Գապոյ ձորի տակ | 0213-0121 | Գյուղ/վարելահող 5-րդ կարգ | 0.144 | 1500 | 100 | Վարելահող | 25 |
| 3. | Գապոյ ձորի տակ | 0213-0122 | Գյուղ/վարելահող 5-րդ կարգ | 0.303 | 2000 | 120 | Վարելահող | 25 |
| 4. | Համալիրի հետնամաս | 0217-0002 | Գյուղ/վարելահող 5-րդ կարգ | 0.2529 | 3000 | 200 | Վարելահող | 25 |

Ավագանի՝ Կողմ (10), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Արկադի Ալեքսանյան
Արսեն Աղիզյան
Նվարդ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Ռոման Հակոբյան
Մորիս Սարիբեկյան
Մուշեղ Տոնոյան
Աստուր Քոչարյան
Արթուր Փարվանյան

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Աբրահամյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# Ա Պ Ա Ր Ա Ն Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2017Թ N 10-Ա**

### ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝համայնքի սեփականություն համարվող 2.6579 հա հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու համար:
2.Հաստատել օտարվող հողամասերի մեկնարկային գները և հավելաճի քայլերը՝ համաձայն աղյուսակի:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող տասներորդ օրը:
4.Համայնքի ղեկավարին՝ ապահովելու աճուրդի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր աճուրդը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

**Աղյուսակ**

| Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Նպատակային նշանակությունը, հողատեսքը | Մակերեսը/հա/ | Մեկնարկային գինը/դրամ/ | Հավելաճի քայլը /դրամ/ | Անվանումը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Մոզոլան հանդամաս | 0213-0003 | Գյուղ/վարելահող 5-րդ կարգ | 0.419 | 31000 | 1600 | Վարելահող |
| 2. | Խրբի տակ | 0216-0017 | Գյուղ/վարելահող 3-րդ կարգ | 0.8049 | 184000 | 9500 | Վարելահող |
| 3. | Դավաբոյի տարածք | 0204-0202 | Գյուղ/վարելահող 2-րդ կարգ | 0.473 | 126000 | 6500 | Վարելահող |
| 4. | Գյոլերի տարածք | 0218-0310 | Գյուղ/վարելահող 5-րդ կարգ | 0.431 | 32000 | 1700 | Վարելահող |
| 5. | Խոտերի տարածք | 0223-0003 | Գյուղ/վարելահող 1-ին կարգ | 0.53 | 193500 | 9700 | խոտհարք |

Ավագանի՝ Կողմ (10), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Արկադի Ալեքսանյան
Արսեն Ազիզյան
Նվարդ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Ռոման Հակոբյան
Մորիս Սարիբեկյան
Մուշեղ Տոնոյան
Ասատուր Քոչարյան
Արթուր Փարվանյան

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Աբրահամյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2017Թ N 11-Ա

## ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության <<Հողի հարկի մասին>> օրենքի 10-րդ և <<Գույքահարկի մասին>> օրենքի 15/3,4 հոդվածների պահանջների, հիմք ընդունելով Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝*

1. Ապարանի համայնքի զոհված ազատամարտիկների ընտանիքներին տալ հարկային արտոնություններ՝ համաձայն N 1 հավելվածի:

Ավագանի՝ Կողմ (10), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Արկադի Ալեքսանյան
Արսեն Ազիզյան
Նվարդ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Ռոման Հակոբյան
Մորիս Սարիբեկյան
Մուշեղ Տոնոյան
Ասատուր Քոչարյան
Արթուր Փարվանյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

Հավելված N 1

## ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| N | Զոհվածի անուն-ազգանունը | Հողի հարկ | | | | Գույքի հարկ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Տնամերձ | | Գյուղատնտ | Ընդամեն | Շինութ | Ավտո | Ընդամեն |
| | | Ապառ | Տույժ | | | | | |
| 1 | Նահապետ Տոնոյանի ընտանիք | 6596 | | 1820 | 8416 | 0 | 18420 | 18420 |
| 2 | Աշխարհիկ Սաֆարյանի ընտանիք | 2865 | | 3441 | 6306 | 0 | 0 | 0 |
| 3 | Ռաֆիկ Եղիազարյանի ընտանիք | 0 | | 3673 | 3673 | 7119 | 80000 /50% | 87119 |
| 4 | Մայիս Սիրեկանյանի ընտանիք | 4648 | | 5928 | 10576 | 0 | 8000 | 8000 |
| 5 | Սամվել Բալասանյանի ընտանիք | 2973 | | 2260 | 5233 | 0 | 0 | 0 |
| 6 | Հովհաննես Հովակիմյանի ընտան. | 0 | 5270 | 1986 | 7256 | 0 | 11600 | 11600 |
| 7 | Արտակ Բարսեղյանի ընտանիք | 8902 | | 1648 | 10550 | 0 | 0 | 0 |
| 8 | Սեյրան Բաղդասարյանի ընտանիք | 0 | | 0 | 0 | 0 | 0 | |
| 9 | Ժիրայր Գեղամյանի ընտանիք | 3098 | | 1953 | 5051 | 0 | 0 | 0 |
| 10 | Արամ Սիմոնյանի ընտանիք | 4947 | | 4858 | 9805 | 0 | 7200 | 7200 |
| 11 | Աշոտ Հարությունյանի ընտանիք | 3498 | | 2039 | 5537 | 0 | 0 | 0 |
| 12 | Քյարամ Ղազարյանի ընտանիք | 2808 | | 0 | 2808 | 0 | 0 | 0 |
| 13 | Ռոման Սիմոնյանի ընտանիք | 7320 | | 2506 | 9826 | 0 | 0 | 0 |
| 14 | Հովհաննես Երեմյանի ընտանիք | 0 | 7352 | 2055 | 9407 | 0 | 9000 | 9000 |
| 15 | Արսեն Աբրահամյանի ընտանիք | 1049 | | 2601 | 3650 | 834 | 0 | 834 |
| 16 | Գուրգեն Սահակյանի ընտանիք | 2371 | | 2852 | 5223 | 0 | 0 | 0 |
| | | 51.071 | 12.622 | 39.620 | 103.317 | 7.953 | 134.220 | 142.173 |

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2017 Թ N 12-Ա

## Բ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 16-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Ընդունել համայնքի ղեկավարի առաջարկությունը և տալ համաձայնություն՝ Բագրատ Գրիգորի Բաղդասարյանին ,,Ապարանի քաղաքային համայնքի մանկապատանեկան մարզադպրոց'' ՀՈԱԿ տնօրեն նշանակելու համար:

Ավագանի՝ Կողմ (10), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Արկադի Ալեքսանյան
Արսեն Ազիզյան
Նվարդ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Ռոման Հակոբյան
Մորիս Սարիբեկյան
Մուշեղ Տոնոյան
Ասատուր Քոչարյան
Արթուր Փարվանյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան